

ԲԱԺԻՆ 5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՏՐՈՊՈԼՈԳԻԱ
РАЗДЕЛ 5: ПЕДАГОГИЧЕСКАЯ АНТРОПОЛОГИЯ
SECTION 5: PEDAGOGICAL ANTHROPOLOGY

**ԹՎԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԱՆՏՐՈՊՈԼՈԳԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Ղազարյան Արևիկ

Երևանի պետական համալսարան,

Հայաստան

Համառոտ ներածական: Ժամանակակից անտրոպոլոգների կարծիքով մարդկության ֆիլոգենետիկական զարգացման ծրագրի և անձի օնոտգենետիկական զարգացման ծրագրում որոշակի անհրաժեշտ համապատասխանեցում է ենթադրվում, որը պայմանավորված է նորագույն տեխնիկայով և բարձր տեխնոլոգիաներով, հաղորդակցման առցանց մոդելներով, ժամանցի վիրտուալ կազմակերպմամբ, առանց որոնց ներկայումս հնարավոր չէ մարդու սոցիալականացումը: Տարբեր ոլորտի մասնագետներ բազմիցս վերլուծել և հիմնավոր փաստարկել են համակարգչի վնասակար ներգործության մասին մարդու զարգացման տարբեր՝ կենսաբանական, սոցիալական, մտավոր և հոգևոր մակարդակների վրա, սակայն օրեցօր ավելանում է մարդու կախվածությունը համակարգչից, և գործունեության տարբեր տեսակներ՝ խաղ, ուսում, աշխատանք, անգամ կառավարում, իրականացվում է վիրտուալ իրականության մեջ: Նոր ուղղության՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգների կարծիքով ժամանակն է խոսելու սովորողի համակարգչային սոցիալականացման՝ որպես մարդու ընդհանուր սոցիալականացման գործընթացի բաղադրիչի մասին, և մանկավարժական անտրոպոլոգիայի ուսումնասիրության օբյեկտը դիտարկելու մարդ+տեխնիկական (ռուսական հիբրիդային մոդել) կամ մարդ+արհեստական միջավայրը (ամերիկյան հիբրիդային մոդել):

Բանալի բառեր: Թվային մանկավարժ անտրոպոլոգ, համակարգչային սոցիալականացում, տեխնոանտրոպոլոգիա, անտրոպոտեխնոմորֆիզմ, վիրտուալ զարգացման քարտեզ:

Հիմնախնդիր: Թվային մանկավարժական անտրոպոլոգիական ուղղության արագընթաց զարգացումը՝ տեխնոանտրոպոլոգիայի հիմքով, հանգեցնում է նոր՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտացման ձևավոր-

ման, որը պետք է ունենա համապատասխան մասնագիտական կոմպետենցիաներ, ապահովի սովորողների համակարգչային սոցիալականացումը՝ մշակելով սովորողի վիրտուալ անհատական զարգացման քարտեզները:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Թվային անտրոպոլոգիական մանկավարժության ձևավորման նախադրյալները դիտարկվում են այն ժամանակից սկսած, երբ տեխնիկական և հատկապես բջջային հեռախոսն ու համակարգիչը ներխուժեցին մարդու գործունեության տարբեր ոլորտներ: Անտրոպոցենտրիկ մոտեցումը գերակայեց, սակայն ժամանակի ընթացքում անհրաժեշտություն առաջացավ ներդրվածությունների մակարդակում ուղեղի «խնայողական» ռեժիմով աշխատանքը համալրելու մարդու՝ իր իսկ կողմից ստեղծված վիրտուալ իրականությանը, տարբեր ոլորտներում նորագույն, բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք արհեստական ինտելեկտի ստեղծման հրամայական են: Ներկա փուլի մարտահրավերները, վերարժեքավորումը, հասարակության, սոցիալական շերտերի տարբեր պահանջները, սոցիալական ցանցերը, հաղորդակցական մոդելներն իրենց կնիքն են թողնում մարդկանց սոցիալականացման ընթացքում կենսաբանական և սոցիալ-մշակութային ծրագրերի զարգացման, հետևաբար նաև մարդկային փոխհարաբերությունների վրա: Բնություն-մարդ-հասարակություն-մշակույթ-կրթություն մեգահամակարգի ենթահամակարգերում պարտադիր միջնորդ-կցորդ հանդես է գալիս «արհեստական», վիրտուալ միջավայրը: Այս է պատճառը, որ նախորդ դարից սկսած՝ անտրոպոլոգիական միջազգային ֆորումներում առաջարկվում է խոսել *մարդ+արհեստական միջավայր հիբրիդի* (ամերիկյան մոդել) մասին, որը բժշկական, փիլիսոփայական, հոգեբանական, սոմատիկ, անգամ կրոնական անտրոպոտեխնոմորֆիզմի պատճառ և հետևանք է հանդիսանալու: Անտրոպոլոգները կանխատեսում են համակարգչային սոցիալականացման մասին՝ նշելով, որ կիրքերմարդը մարդու մարմինն է (գենետիկական, սոմատիկ, ներթոֆիզիոլոգիական, անատոմիական կազմվածքով)՝ գումարած տեխնիկական միջոցները, գործիքակազմը վիրտուալ իրականության մեջ: Փաստորեն, մարդու եռահամաչափությունը մարմին, միտք և հոգի դիալեկտիկայում վերջին երկուսի վրա երբեմն անկանխատեսելի ինչպես դրական, այնպես էլ բացասական ներգործություն կարող է ունենալ վիրտուալ իրականությունը: Իրական կյանքում ծագող և անլուծելի խնդիրները մարդուն հրահրում են վիրտուալ իրականության ընտրության, որը, ինչպես փաստում են հոգեբանական անտրոպոլոգիայի մասնագետները, հոգեբանական պաշտպանական ռեֆլեքսիա է: Առայժմ գերակա խնդիրներից մեկը այդ

ընթացքում կենսաբանական պահանջումները բավարարման խնդիրն է, որը մասնագետների կարծիքով նույնպես ենթադրվում է, որ ժամանակի ընթացքում կլուծվի: Առավել բարդ և մտահոգիչ է բանական մարդու՝ իրեն վերարտադրելու կարողության և, *ինչու չէ, նաև ցանկության խնդիրը*: Եվ ինչպես մասնագետներն են (Վ. Ալեքսեև, Յ. Չեսնով, Ս. Սոկոլովսկի, Վ. Կրուպկին) պնդում, եթե վերորոշվարկյալն անխուսափելի է, ապա գոնե այն պետք է հնարավորինս կառավարելի դարձնել, նկատի ունենալ ռիսկերը: Հիմնախնդրի քննարկումներն ակտիվացել են. վերջին՝ 2018 թ. միջազգային անտրոպոլոգիական ֆորումում ներկայացվել են Դ. Միլլերի, Խ. Խոբստ, Ս. Պոնտի, Է. Խոլիի, Գ. Բեյթսոնի, Ս. Սոկոլովսկու, Վ. Կրուպկինի ուսումնասիրությունները:

Հողվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել թվային մանկավարժանտրոպոլոգի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման պայմանների անհրաժեշտությունը տեսական մակարդակում և պրակտիկայում:

Հետազոտության նորույթը: Հիմնավորվում է հետազոտության դրույթը՝ ըստ որի՝ թվային մանկավարժական անտրոպոլոգիական ուղղության արագընթաց զարգացումը ենթադրում է նոր մասնագիտացման ձևավորման՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգների, որոնք, ունենալով համապատասխան կոմպետենցիաներ, ընդհանուր սոցիալականացման համատեքստում կիրականացնեն սովորողների համակարգչային սոցիալականացումը: Թվային մանկավարժ-անտրոպոլոգները (Ս. Պոնտի, Է. Խոլիի, Գ. Բեյթսոն, Դ. Միլլեր, Ս. Սոկոլովսկի, Վ. Կրուպկին) կանխատեսում են, որ մանկավարժական անտրոպոլոգիայի ուսումնասիրության օբյեկտը կլինի կիբերմարդը, իսկ առարկան՝ համակարգչային սոցիալականացումը, քանի որ արհեստական ինտելեկտի ստեղծման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը էվոլյուցիայի ընթացքում նույնպես պատահական չեն:

Հիմնական նյութի շարադրանքը: Ժամանակը ցուցիչային ինդիկատոր է: Այն որոշում է դարաշրջանի ձեռքբերումները՝ իր կնիքը թողնելով դրանց վրա և մարտահրավերներ ներկայացնում նոր ինովացիաների: Իրավիճակի փոփոխությունը հանգեցրել է իրականության ընկալման նոր ձևաչափերի՝ աշխարհընկալման վիրտուալ իրականության, որի ընթացքում մարդկության կուտակած սոցիալական փորձը, համապատասխան կարողություններն ու հմտությունները վերանայման կարիք ունեն՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին (օրինակ՝ Covid 19-ի ընթացքում): Տեխնոանտրոպոլոգիական մեթոդաբանական հիմքով գերարագ զարգացող մանկավարժական

անտրոպոլոգիայի նոր ուղղություններից մեկը՝ թվային մանկավարժական անտրոպոլոգիան ենթադրում է կրթական հարացույցի փոփոխություն: Անձնակողմնորոշիչ ձևավորող կրթական հարացույցում առաջարկվում են թե՛ սովորեցնող և թե՛ սովորող սուբյեկտները (ըստ Դ. Միլլերի, Ս. Սոկոլովսկու, Վ. Կրուպկինի, Մ. Կոժնիկովայի) դիտարկել *մարդ+արհեստական միջավայր հիբրիդով՝ որպես մեկ գործառական միավոր*, ուր էվոլյուցիայի ֆունդամենտալ միավորը մարդ+տեխնիկան է, որը որպես արդյունք և հետևանք է վիրտուալ իրականության: Մարդը համակարգչային սոցիալականացման արդյունքում ենթարկվում է անտրոպոտեխնոմորֆիզմի: Ինովացիա է թվային մանկավարժական անտրոպոլոգի գործունեությունը, որը սկզբում ձևավորվել է ոչ ֆորմալ առցանց հարթակում (ԱՄՆ, Անգլիա, այժմ՝ նաև ՌԴ) մարդկանց կողմնորոշելու, վիրտուալ իրականության մեջ իրավիճակները կանխատեսելու և աջակցելու նախատրամադրվածությամբ: 2000 թվականից սկսած (նախադրյալներն ավելի շուտ)՝ տարբեր երկրների միջգիտական աղերսային քննարկումները միջազգային անտրոպոլոգիական ֆորումներում (հիմնականում ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա և ՌԴ) և կանխատեսումները փաստեցին, որ արհեստական ինտելեկտի և համակարգչային սոցիալականացման պայմաններում կա անհրաժեշտություն նոր թվային անտրոպոլոգի մասնագիտացման [3, 7, 4,75]:

Թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտական գործունեությունը պետք է ծավալվի երկու հիմնական ուղղությամբ՝ *սոցիալական-հումանիստական* և *ազատ-հումանիստական*:

Սոցիալական-հումանիստական – սոցիալական ճանաչողության հիմքով անհրաժեշտ է հումանացնել անձի սոցիալականացման գործընթացը: Այս ուղղության ներկայացուցիչներն (Ա. Բարնս, Ս. Միտչել, Պ. Բուրտ) առաջարկում են զարգացնել սովորողների ինքնագիտակցման և ինքնաիրացման որակները:

Ազատ-հումանիստական – անհրաժեշտ է ազատ միջավայրի (այդ թվում՝ նաև արհեստական) այնպիսի պայմանների ստեղծումը, որը կհանգեցնի սպոնտան զարգացմանը, ազատ ստեղծագործական աշխատանքի: Ուղղության կարգախոսն է «ազատ կենդանի մարդ»՝ ազատ մտքով, զգացմունքներով, կամքով (Ն. Բոգատիր, Ի. Մորոզով, Մ. Կոժնիկովա):

Թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտական գործունեության հիմքում պետք է դրվեն երկու հիմնական՝ 1. ամբողջական ուսումնասիրությունների և 2. զարգացման ընթացքում փոփոխությունների գրանցման և պարբերաբար վերլուծության սկզբունքները (մեր կողմից համադրվել և համակարգ-

ված ներկայացվել են ամերիկյան և ռուսական անտրոպոլոգների մոտեցումները):

1. *Ամբողջական ուսումնասիրությունների սկզբունք* – հնարավորություն է տալիս որպես մեթոդաբանական հիմք դիտարկելու մանկավարժական անտրոպոլոգիայի ձեռքբերումները, որն իր հերթին նույնպես համակարգում է տարբեր գիտությունների գիտելիքները, նորարարություններն ու նորամուծությունները: Տրամաբանորեն պետք է լրացնեն իրականությունը և վիրտուալ աշխարհը:

2. *Չարգացման ընթացքում փոփոխությունների գրանցում և պարբերաբար վերլուծության սկզբունք* – զարգացումը հանգեցնում է քանակական և որակական փոփոխությունների՝ տարիքային, անհատական, հոգեբանական, սեռային առանձնահատկություններին համապատասխան, որոնք արտահայտվում են սոցիալականացման ընթացքում: Եթե այս սկզբունքը չի հաշվառվում, խախտվում են մանկավարժական անտրոպոլոգիայի հիմքերը, քանի որ այդ փոփոխություններով են պայմանավորված ինչպես մարդ տեսակի, այնպես էլ անհատական զարգացման գոյի էվոլյուցիան: Մոլորողների վիրտուալ ներկայությունը, մասնակցությունն այդ միջավայրին կարգավորվում է անհատական քարտեզագրման ընթացքով, որի ժամանակ անտրոպոլոգ մանկավարժը նախապես ուսումնասիրում է այն վիրտուալ տիրույթը, որը ինքը պետք է կառավարի: Թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտական գործունեությունը անտրոպոլոգիական տարբեր դպրոցներում տարբեր է: Եթե ամերիկյան դպրոցն ընդունում է հիբրիդային մոդելը [7,14], ապա գերմանական անտրոպոլոգիական դպրոցում ձևավորված հայեցակարգերին համապատասխան՝ Բ. Համաննը [1,11] առաջարկում է ժամանակակից անտրոպոլոգիական հիմնախնդիրները լուծել ըստ տարբեր ոլորտների՝ 1. մարդու դիտարկումը բջջաբանական, կենսաբանական և մորֆոլոգիական տեսակետներից, 2. պոստմոդեռնիստական մտածողության ուսումնասիրում, 3. նեյրոգիտական գիտելիքների կարևորում: Եթե գերմանական անտրոպոլոգիական դպրոցում կարևորվում են անտրոպոլոգիական գիտելիքները՝ որպես աշխարհայացքի ձևավորման, աշխարհընկալման, կյանքի ընթացքում հարմարման մեխանիզմներ, որոշ դեպքերում նաև գործիքներ կիրառելու հնարավորություն, ապա ռուսական անտրոպոլոգիական դպրոցի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այստեղ քննարկվող մանկավարժական անտրոպոլոգիական հիմնախնդիրներն առավել շատ ուսումնասիրվում են բնություն-մարդ-մշակույթ-

կրթություն համակարգում՝ տեխնոանտրոպոլոգիական մեթոդաբանական հիմքով:

Վիրտուալ իրականության մեջ կարևորվում են հաղորդակցական մոդելները, արժեքային համակարգը, որոնք հնարավորություն են տալիս թվային մանկավարժ-անտրոպոլոգին դիտարկելու ընդհանուրի, հատուկի, եզակիի դիալեկտիկական միասնությունը:

Ռուս անտրոպոլոգիական մտքում թվային մանկավարժ-անտրոպոլոգը կարող է դիտարկել հետևյալ առանձնահատկությունները [6,35].

- վիրտուալ իրականության մեջ նույնպես կրթությունը դիտարկվում է որպես մարդկային գոյի անհրաժեշտ բաղադրիչ՝ մարդու գոյատևման և զարգացման նպատակաուղիված պայման,
- մարդկային էությունից ելնելով՝ համակարգչային սոցիալականացման ընթացքում անհատական քարտեզագրման մեջ ընտրվում և մշակութային համապատասխան շերտում ձևավորվում են կրթության նպատակներն ու միջոցները, այս դեպքում կրթության մեթոդաբանական հիմքը անտրոպոլոգիական փիլիսոփայությունն է, անտրոպոլոգիական դաստիարակության վեկտորալ ուղղվածությունը տանում է արժեքային համակարգից մշակույթ,
- միջգիտական և մանկավարժական գիտությունների համակարգում երջանկության, կյանքի իմաստի, հավերժության, ազատության, վիրտուալ անտրոպոլոգիական կրթական տարածք հասկացություններն ընկալվում են յուրովի՝ նայած, թե թվային մանկավարժ-անտրոպոլոգն ինչպիսի վեկտորյալ ուղղորդում է քարտեզագրել, որտեղ սովորողի վիրտուալ «ես»-ը չի երկատվում իրական կյանքից:

Այսպիսով՝ թվային մանկավարժ անտրոպոլոգի մասնագիտական կոմպլեքտենցիաների ձևավորման պայմաններն են՝ 1. ոչ ֆորմալ պրակտիկ գործունեությունից անցում ֆորմալ մասնագիտական գործունեության, 2. համապատասխան որակավորմամբ թվային մանկավարժ-անտրոպոլոգների պատրաստում, 3. թվային մանկավարժ-անտրոպոլոգների գործունեության ոլորտների ճշգրտում, 4. մասնագիտական գործունեության գործառույթների հստակեցում, 5. թվային մանկավարժ-անտրոպոլոգների իրավունքների և պարտականությունների սահմանում՝ համապատասխան իրավա-նորմատիվային փաստաթղթերի հիման վրա, 6. թվային մանկավարժ-անտրոպոլոգների կողմից թույլատրելի գործիքակազմի կիրառում, 7. թվային մանկավարժ-անտրոպոլոգ-

ների ատեստավորում՝ մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման համապատասխանեցմամբ :

Օգտագործված գրականության ցանկ

1. Bruno Hamann, Pädagogische Anthropologie, Peter Lang, 2005, pp. 11-137.
2. Соколовский С. В., Антропология живого и неживого: случай тела и техники Антропологический форум, 2018, N 38, с. 83-96.
3. Соколовский С. В., Киберчеловечество как предмет антропологии, журнал Сибирские исторические исследования, 2018, N3, 7.
4. Соколовский С. В., Человек 2.0 в фокусе антропологии, журнал «Сибирские исторические исследования», 2018, N3, 75.
5. Крупкин В., Социокультурная материальность в антропологии Д. Миллера, журнал Социологии и социальной антропологии, 2017, т. XX, N 1.
6. Богатырь Н., Сетевой анализ в антропологии, М., 2015, 35 с.
7. Кожевникова М., Гибриды и химеры человека и животного в науке, Инновации в антропологии, М., 2015, 14 с.

УСЛОВИЯ РАЗРАБОТКИ ПРОФЕССИОНАЛЬНЫХ КОМПЕТЕНЦИЙ ЦИФРОВОГО ПЕДАГОГА-АНТРОПОЛОГА

Казарян Аревик

*Ереванский государственный университет,
Армения*

Аннотация

По мнению современных антропологов, в программах филогенетического развития человечества и онтогенетического развития личности существует определенное необходимое соответствие, обусловленное виртуальной реальностью, новейшей техникой и высокими технологиями, моделями онлайн-общения, виртуальной организацией развлечений, без которых в настоящем невозможно представить социализацию человека. Согласно новому направлению, а именно, по мнению цифровых педагогов-антропологов необходимо представить компьютерную социализацию учащегося как компонент процесса общей социализации человека, а также рассмотреть объект изучения педагогической антропологии и соответствующую образовательную парадигму.

Проблема. Стремительное развитие цифрового педагогического антропологического направления, на основе техноантропологии, приводит к развитию новой специализации, а именно, цифрового педагога-антрополога. Он должен обладать соответствующими профессиональными компетенциями, обеспечивать компьютерную социализацию учащихся, разрабатывая виртуальные карты их индивидуального развития.

Новизна исследования. Обосновано положение исследования, согласно которому стремительное развитие цифрового педагогического антропологического направления предполагает формирование новой специализации – цифровых педагогов-антропологов, которые, обладая соответствующими профессиональными компетенциями, проведут компьютерную социализацию учащихся в контексте общей социализации. Согласно прогнозам цифровых педагогов-антропологов, объектом изучения педагогической антропологии станет кибер-человек, а предметом – компьютерная социализация.

Профессиональная деятельность цифрового педагога-антрополога должна развиваться по двум основным направлениям: социально-гуманистическому и свободно-гуманистическому. В основу его деятельности должны входить два важных принципа:

1. принцип целостного исследования,
2. принцип регистрации изменений и регулярного анализа в процессе развития.

К условиям формирования профессиональных компетенций цифрового педагога-

антрополога относятся:

1. переход от неформальной практической деятельности к формальной профессиональной теоретической и практической деятельности,
2. соответствующая квалификация – подготовка цифровых педагогов-антропологов,
3. уточнение сфер деятельности цифровых педагогов-антропологов,
4. конкретизирование функций профессиональной деятельности,
5. определение прав и обязанностей цифровых педагогов-антропологов на основании соответствующих нормативно-юридических документов,
6. использование цифровыми педагогами-антропологами ряда допустимых педагогических инструментов,
7. аттестация цифровых педагогов-антропологов в соответствии с повышением профессиональных компетенций.

Список использованной литературы

1. Bruno Hamann, *Pädagogische Anthropologie*, Peter Lang, 2005, 11-137.
2. Соколовский С. В., Антропология живого и неживого: случай тела и техники // Антропологический форум, 2018, N 38, с. 83-96.
3. Соколовский С. В., Киберчеловечество как предмет антропологии // Журнал Сибирские исторические исследования, 2018, N3, 7.
4. Соколовский С. В., Человек 2.0 в фокусе антропологии // Журнал Сибирские исторические исследования, 2018, N3, 75.
5. Крупкин В., Социокультурная материальность в антропологии Д. Миллера // Журнал Социологии и социальной антропологии, 2017, т. XX, N 1.
6. Богатырь Н., Сетевой анализ в антропологии, М., 2015, 35 с.
7. Кожевникова М., Гибриды и химеры человека и животного в науке // Инновации в антропологии, М., 2015, 14 с.

CONDITIONS FOR DESIGNING THE SPECIAL COMPETENCES OF DIGITAL PEDAGOGUE-ANTHROPOLOGIST

Ghazaryan Arevik
YSU, Armenia

Summary

According to modern anthropologists, the program of phylogenetic development of mankind's and the ontogenetic development of the individual presupposes a certain necessary adaptation, which is conditioned by virtual reality, the latest technology, high technologies, online communication models, virtual organization leisure time. Without the mentioned points the socialization of the person is impossible. According to digital pedagogical anthropologists, it is time to talk about the computer socialization of the learner, as a component of the general human socialization process, to review the object of study of pedagogical anthropology, and the corresponding educational paradigm.

The problem. The rapid development of the digital pedagogical anthropological field on the basis of techno anthropology leads to the development of a new specialization of digital pedagogical anthropologist. The professional must have appropriate professional competencies, ensure the computer socialization of the learners, developing the virtual individual development maps of the learner.

The novelty of the research. The research provision is substantiated, according to which the rapid development of digital pedagogical anthropological direction presupposes the formation of a new specialization - digital pedagogical anthropologists, who, having relevant professional competencies, will carry out computer socialization of students in the context of general socialization. Digital pedagogical anthropologists predict that the object of study of pedagogical anthropology will be the cyber human, and the subject - computer socialization.

The professional activity of a digital pedagogical anthropologist should be developed in two main directions: social-humanistic and free-humanistic. The activities should be based on two main principles: 1. complete research 2. principles of recording changes and regular analysis during the development process.

The conditions for developing the professional competencies of a digital pedagogical anthropologist are:

1. Transition from non-formal practical activity to formal professional theoretical-practical activity
2. With appropriate qualification: training of digital pedagogical anthropologists
3. Specification of the fields of activity of digital pedagogical anthropologists,
4. Clarification of the functions of professional activity,
5. Definition of rights and responsibilities of digital pedagogical anthropologists on the basis of relevant normative documents
6. Use by digital educators-anthropologists of a range of valid pedagogical tools,
7. Certification of digital educators-anthropologists in accordance with the improvement of professional competencies.

References:

1. Bruno Hamann, Pädagogische Anthropologie, Peter Lang, 2005, pp. 11-137.
2. Sokolovskiy S. V., Anthropology of the Living and the Dead: The Case of Human Body and Technics. Antropologicheskij Forum. # 38, pp. 83-96.
3. Sokolovskiy S. V., Cyber-humanity as an object in anthropology, Siberian historical research Journal, 2018 N3
4. Sokolovskiy S. V., Human 2.0 in the anthropological focus, Siberian historical research Journal, 2018, N3.
5. Krupkin V., Socio-cultural material in anthropology of D. Miller, Sociology and social anthropology Journal, 2017, t. XX, N1.
6. Bogatir N., Network analysis in anthropology, M., 2015, 35 p.
7. Kozhevnikova M., Hybrids and chimeras of humans and animals in science, Innovations in anthropology, M., 2015, 14 p.

Материал был представлен и отправлен на рецензию: 02.10.2020

Принято к публикации: 20.10.2020

Рецензент: доктор пед.наук, проф. Паргев Геворгян

The material was submitted and sent to review: 02.10.2020

Was accepted for publication: 20.10,2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Pargev Gevorgyan